ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ (1920-1924 ԹԹ.)

Նարինե Մարգարյան

Երիտթուրքական կառավարության կողմից իրագործված Հայոց ցեղասպանության կարևոր բաղադրիչ էր արևմտահայ բնակչության տարագրումը Սիրիական անապատներ: Վերջիններիս զանգվածային ներկայությունը Սիրիայում նորանոր խնդիրներ էր առաջացնում: Հայ տարագիրները սկզբից ևեթ պետք է ինտեգրվեին երկրի սոցիալական կյանքում, քանի որ բարեգործական ընկերությունների, միսիոներական կազմակերպությունների կողմից տրամադրվող օգնությամբ նրանք երկար չէին կարող գոյատևել:

Հոդվածում վերլուծվում է հայ տարագիրների ինտեգրումը Սիրիայի սոցիալական կյանքում ընդհուպ մինչև 1924թ.: Ներկայացվում են տարագիրների առջև ծառացած սոցիալական խնդիրների աստիճանական լուծումները, հայ-արաբական փոխադարձ ադապտացումը, ինտեգրման ճանապարհին հանդիպող խոչընդոտները, արաբ ժողովրդի ու կառավարության ձեռնարկած միջոցառումները և հարակից մի շարք այլ խնդիրներ:

Ցեղասպանությունից հետո աստիճանաբար հայ տարագիրները վերածվում են համայնքի՝ սեփական կառավարման և ինքնակառավարման համայնքային կառույցներով: Համայնքը դառնում է մի կառույց, որն ուներ իր նպատակը, խնդիրները, և որոնց լուծմանը մասնակցում են տվյալ էթնիկ խմբին պատկանող անհատները[1]: Փաստորեն, Հայոց ցեղասպանությունից հետո Սիրիայում ապաստանած հայերը 1920-ական թվականների կեսերին վերաձևավորում են տեղի հայ համայնքը:

Սփյուռքին նվիրված աշխատություններում համայնքին տրվում է հետևյալ ընդհանրական սահմանումը: Համայնքներ են համարվում «արտագաղթի հետևանքով այլ պետություններում բնակվող և գործունեություն ծավալող խմբերը, որոնք պահում են հոգևոր և նյութական կապն իրենց հայրենիքի հետ»[2]: Համայնքն այս պարագայում «միայն մարդկանց կոնգլոմերատ չէ, այլ սոցիալական օրգանիզմ, որն ունի մի ընդհանուր էթնիկ հենք»[3]: Ազգագրագետ Լ. Աբրահամյանի կարծիքով Սփյուռքի առաջացման պատճառների հիմքում, որպես կանոն, ընկած են պատմական ողբերգությունները, դրա ապացույցն է նաև Հայոց ցեղասպանությունից հետո հայկական սփյուռքի ձևավորումը[4]:

---

[1] Տե՛ս Гриншилдс Х. Т., *Поселение армянских беженцев в Сирии и Ливане в 1915-1939гг.*, Ереван, 1982/2, էջ 13:

[2] Dufoix St., *Diasporas,* London, Berkeley and Los Angeles, 2008, p. 21.

[3] Дятлов В., Мелконян Э., *Очерки социокультурной типологии. Армянская диаспора*, Ереван, Институт Кавказа, 2003, с. 12.

[4] Տե՛ս Абраамян Л., Армения и армянская диаспора: Расхождение и Встреча, “*21-й Век”*, номер 2, 2005. էջ 143:

Համայնքը չի կարող չինտեգրվել բնակության երկրի սոցիալական, տնտեսական, քաղաքական համակարգերում, դա բնականոն գործընթաց է, ինչպես նաև համայնքը բնորոշող առանձնահատկություն: Միևնույն ժամանակ համայնքի բնորոշ հատկանիշներից մեկն այն իրողությունն է, որ վերջինիս անդամները վստահ են, որ չեն դարձել և հնարավոր է, որ չդառնան իրենց ընդունող հասարակության լիիրավ անդամ, ուստի իրենց մի փոքր մեկուսացած ու օտար են զգում[5]:

Անդրադառնալով Սիրիայի հայ տարագիրներին՝ հարկ է նշել, որ նրանք ընդունող երկրում անցնում են ինտեգրվելու մի քանի փուլեր: Հատկանշական է, որ եթե սկզբնական շրջանում տարագիրներին առնչվող հարցերն ու խնդիրները հիմնականում քննարկվում են արաբների կողմից հայ տարագիրներին ցուցաբերվող օգնության, ապա 1920-ական թթ. սկզբից՝ հայ-արաբական համագործակցության և փոխօգնության համատեքստում, զուգահեռ ներկայացվում են նաև ֆրանսիական մանդատային իշխանությունների ունեցած դերակատարությունն ու միջամտությունը Սիրիայում հայ տարագիրների ինտեգրման և հայ-արաբական փոխհարաբերությունների գործընթացում:

Անդրադառնալով հայ տարագիրների վիճակին՝ առաջին հերթին պետք է հաշվի առնել մի կարևոր փաստ ևս, որ ցանկացած ազգային փոքրամասնության գոյավիճակ պայմանավորված է ընդունող երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակով և մշակութային մի շարք առանձնահատկություններով: Առաջին հերթին պետք է հաշվի առնել, որ հայերը Սիրիայում հայտնվում են մի ժամանակաշրջանում, երբ դեռ Առաջին համաշխարհային պատերազմը չէր վերջացել, սով էր, ու Սիրիան դեռ համարվում էր Օսմանյան կայսրության մաս: Բացի դրանից, հայ տարագիրները ցեղասպանությունը վերապրելուց հետո առավել զգուշավոր էին դարձել ու անվտանգության հարցին լուրջ էին վերաբերվում: Հայտնվելով Սիրիայում՝ նրանք հայտնվել էին նոր միջավայրում, որտեղ կային մի շարք էթնիկական տարբերակիչներ, որոնցից էին ոչ միայն կրոնը, այլ նաև լեզվական, մշակութային և այլ գործոններ: Տարբերակիչ հատկությունների այս համադրությունը, որը ստեղծում էր մուսուլմանական միջավայրը, սահմանազատիչ կարևոր նշանակություն է ունենում հայ տարագիրների համար՝ նպաստելով սեփական էթնոմշակութային անհատականության պահպանմանը:

Նոր հասարակության մեջ տարագիրների ներգրավումը ժամանակավոր ու անցողիկ գործընթաց է, սակայն նոր ստեղծվող հասարակության մեջ շատ կարևոր է, որ լինի երկուստեք, փոխադարձ ադապտացում: Տեղի բնակչությունը նույնպես չէր կարող իրեն լիովին անվտանգ զգալ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարագիրները սկզբնական շրջանում նրանց համար անծանոթ տարր էին:

Նոր հասարակության մեջ տարագիրներին հարկավոր էր կարգավիճակ՝ քաղաքացիություն, կեցության իրավունք, գրանցում, աշխատանքի թույլտվություն, անվտանգություն, ինչը պետական խնդիր էր: Նման խնդիրները չէին կարող լուծվել անհատի մակարդակով: Պատահական չէ, որ տարագիրների շրջանում աստիճա-

---

[5] Տե՛ս Дятлов В., Мелконян Э., *նշվ. աշխ.*, էջ 16:

նաբար ձևավորվում են պաշտոնական և ոչ պաշտոնական հասարակական կազմակերպություններ, որոնք, բացի իրենց առջև դրված խնդիրներից, օգնում են մարդկանց ներգրավվել երկրի հասարակության մեջ, որը համայնքը տանում է դեպի ակտուալացում[6]:

Քաղաքացիություն չունենալը բազմաթիվ քաղաքական և սոցիալ-տնտեսական դժվարություններ էր առաջ բերում: Հայ տարագիրները, զրկվելով Թուրքիայի քաղաքացիությունից ու ձեռք չբերելով այն երկրների քաղաքացիությունը, որտեղ հայտնվել էին, ակամայից դարձել էին առանց քաղաքացիության անձինք: Նրանք չէին կարող լիարժեք օգտվել քաղաքացիության իրավունքից, այդ թվում՝ այնպիսի կենսական բնագավառներում, ինչպիսիք են աշխատանքի և ապրուստի միջոցներ հայթայթելը, ուսումը, տեղաշարժվելը, սեփականություն ունենալու իրավունքը և այլն: Այսինքն՝ նրանք գտնվում էին ավելի նվազ նպաստավոր դրության մեջ, քան տվյալ երկրի քաղաքացիները[7]:

Ամերիկացի սոցիոլոգ Ս. Դադը Սիրիայում ապաստանած հայ տարագիրների վերաբերյալ գրում է. «Երբ որ ժողովուրդը հսկայ զանգուած մը կը ձգէ իր պապենական բնագաւառը և կը տեղաւորուի նոր երկրի մէջ՝ յոյժ խնդրական կը դառնայ կռահել, թէ ինչպիսի նոր տնտեսական, ընկերային եւ քաղաքական հարցեր կրնան ստեղծուիլ երկրին մէջ, որ իրենց նոր բնակավայրը պիտի ըլլայ»[8]: Նման դեպքում, ինչպես նշում է հեղինակը, արդյունքը կարող է դրական կամ բացասական լինել՝ կապված մի կողմից ներգաղթողների օգտակարության՝ տվյալ երկրին ծառայելու գործոնի հետ, մյուս կողմից էլ նրանց ընդունող երկրի՝ վերջիններիս օգտակարությունը գիտակցելու և իր երկրի շահերին ծառայեցնելու կարողության հետ: «Ինչ էլ որ ըլլայ արդիւնքը՝ պէտք է որ զանոնք նոր միջավայրին պատշաճեցնելու որոշ քաղաքականութիւն մը ընդգրկուի: Կամ այն է, որ ներգաղթողներու հոգատարութիւնը պետք է ստանձնուի եւ կամ թէ ժամանակի ընթացքին անոնք կը մարսուին եւ կիւրացուին բնիկ տարրէն»[9]:

Ս. Դադի նշած բոլոր նկատառումներն այս ժամանակահատվածի հայ-արաբական փոխհարաբերություններում առկա են՝ սկսած հայերի կարողությունների օգտագործումից մինչև կառավարական միջոցառումների ձեռնարկումը՝ հայ տարագիրների վիճակը բարելավելու համար: Այստեղ հայերի համար գրեթե բացառվել է տեղի բնակչությանը ձուլվելու հանգամանքը:

Կարևոր է նաև տվյալ ժամանակահատվածի ղեկավարների դիրքորոշումը, որոնք առավելագույնս պետք է շահագրգռված լինեին տարագիրների պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովելու խնդրով: Այս պարագայում Սիրիայում հայտնված հայերի և երկրի ղեկավարների հարաբերություններն ունեին որոշակի

---

6 Տե՛ս Дятлов В., Мелконян Э., *նշվ. աշխ.*, էջ 29:

7 Տե՛ս Հակոբյան Հ. Վ., *Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը*, Երևան, «Աստղիկ», 2002, էջ 390:

8 Վարժապետեան Ս. Յ., *Հայերը Լիբանանի մէջ, Լիբանանահայ նորոգ գաղութին կազմավորումը*, Պէյրութ, «Սեւան», 1981, հ. Բ, էջ 30:

9 Նույն տեղում:

առանձնահատկություններ, քանի որ սկզբնական շրջանում դեռ երիտթուրքական իշխանություններն էին, Ֆեյսալի կառավարման տարիներին (1918-1920 թթ.) արդեն ձևավորվել էր ազգային փոքրամասնություններին ցուցաբերվող պետական աջակցության միտում: Ֆրանսիական մանդատի տարիներին (1920-1924 թթ.) նկատում ենք, որ հայերի հանդեպ քաղաքականությունը մի քանի անգամ փոփոխության է ենթարկվում, մինչև հայ տարագիրներն իրենք արդեն աստիճանաբար կարողանում են վերագտնել իրենց ու կայանալ:

Հայ տարագիրները, հայտնվելով Սիրիայում, հավելյալ ճնշում էին գործադրում աշխատավարձերի չափերի վրա՝ անուղղակիորեն նպաստելով արաբների շրջանում գործազրկության աճին: Անապատի համակենտրոնացման ճամբարներից խուսափելու համար հայ տարագիրները պատրաստ էին ցանկացած աշխատանքի: Նրանք, աստիճանաբար աշխատանքի նոր ասպարեզներում իրենց դրսևորելով, դժգոհությունների տեղիք են տալիս տեղի արաբների շրջանում: Եվ չնայած ստեղծված իրավիճակին՝ Ս. Վարժապետյանը նշում է. «…գաղթականներուն հոս ըլլալը կրնայ դժուարին մը նկատուիլ Սուրիոյ համար, սակայն ինչ որ ալ ըլլայ պարագան, գնահատելի է, որ Սուրիայ կը գիտակցի այս հարցին լրջութիւնը, կ՚ընդունի զայն որպէս պարտականութիւն»[10]:

Դեռևս Հայոց ցեղասպանության տարիներին Ջեմալ փաշան Թուրքիայի տարագիր հայ արհեստավորներին Դամասկոս էր ուղարկում՝ տեղում արհեստները զարգացնելու, շինարարությանը զարկ տալու համար: Օսմանյան բանակի համար կենսական նշանակություն ունեցող երկաթուղային փոխադրությունը, երկաթուղաշինական աշխատանքների ճնշող մեծամասնությունը նույնպես հայերն էին կատարում:

Արաբների տեսանկյունից միանգամայն հիմնավոր է թվում այն մտահոգությունը, որ աղքատության եզրին կանգնած հայերը տեղի արաբ աշխատավորների աշխատավարձն «անազնիվ» մրցակցության պայմաններում էլ ավելի էին նվազեցնում: Տարագիր հայերն անցանկալի էին համարվում՝ «ծովը թափուելիք» ապրանք: Տեղական մամուլը երբեմն հայերին որակում էր «վնասակար մրցակիցներ» և «անհաւատարիմ հիւրեր»[11], կար նաև այն կարծիքը, որ «Հայերը եկած են եւ իրենց երկրին պէրէքեթը փախցուցած են»[12]:

Հայ տարագիրների կեցության և բնակության հարցերի մասին խոսելիս մի փաստ պետք է նկատել, որ Սիրիայում հայերը համախմբվելու միտում ունեին: 1920-ական թվականներին տարագիրները կենտրոնացած էին հիմնականում Հալեպ, Դամասկոս, Ալեքսանդրետ քաղաքներում՝ ի վնաս գյուղական բնակավայրերի:

Հայ տարագիրների կենտրոնացված ապրելն ուներ իր հիմնավոր պատճառները, որը հիմնականում կապված էր անվտանգության հարցի հետ: Այդ պատճառով նրանք հակառակվում են ֆրանսիացիների՝ իրենց գյուղական վայրեր տեղա-

---

[10] Վարժապետեան Ս. Յ., *նշվ.աշխ.*, էջ 33:

[11] Վարժապետեան Ս. Յ., *նշվ. աշխ.*, էջ 68:

[12] Տատրեան Վ., *Դէպի անապատ (փրկուած էջեր օրագրէս)*, Նիւ Եորք, «Կոչնակ», 1945, էջ 165:

փոխելու սկզբնական փորձերին: Նրանք առաջարկում են իրենց բնակեցնել ավելի անվտանգ վայրերում՝ Ալեքսանդրետի սանջակում, սակայն հայերը մերժում են ոչ միայն Եփրատի ու Հարավային Հաուրանի շրջանում վերաբնակվելը, այլև անգամ Հալեպի հարակից շրջաններ տեղափոխվելը[13]:

Հայերը, 1915թ. հայտնվելով Սիրիայում, ձգտում էին հասնել տնտեսական և սոցիալական փոքր-ինչ կայունության՝ առաջնորդվելով ներհամայնքային համերաշխության մեխանիզմներով: Եվ պատահական չէ, որ շատ արագ ձևավորվում են արդյունավետ գործող, բազմաթիվ ենթակառուցվածքներով արհեստակցական միությունները, կրոնական, բարեգործական, մշակութային, սպորտային կազմակերպությունները, դպրոցները, առևտրական պալատները: Հայերի շրջանում նկատվում է ազգային ինքնությունը պահպանելու մեծ ձգտում, երկրորդ անգամ ծնունդ են առնում կուսակցությունները: Փոխօգնությունն այս համակարգի բաղկացուցիչ մասն է, անգամ գործիքը ներքին սոցիալական վերահսկողության, կառավարման և կարգավորման համար[14]:

Ֆեյսալի իշխանության տարիներին հայ տարագիրները փորձում էին սոցիալապես կայանալ, որին մեծապես նպաստում են վերջինիս ընդունած մի քանի որոշումները պարտքերի հետաձգման, բյուջեից որոշ գումարներ հայերին տրամադրելու վերաբերյալ: Բացի այդ, ինչ-որ չափով մեղմացել էր ցեղասպանությունը վերապրելու ցնցումը, նրանք սկսել էին հարմարվել ու յուրացնել կենցաղը, տիրապետել լեզվին: Վրանաքաղաքները վերածվել էին նրանց համար մշտական բնակության վայրի, ու քչերն էին մտածում այդտեղից տեղափոխվելու մասին: Դա պայմանավորված էր մի քանի պատճառով: Նախ՝ առանձին տեղափոխվելը նրանց համար ընդունելի տարբերակ չէր, երկրորդ՝ տնտեսական այդ ճգնաժամի պայմաններում հայերը դեռ ի վիճակի չէին վճարելու տեղափոխման ծախսերը և գյուղում բնակվելու, որտեղ միայն կապիտալ ունենալու դեպքում նոր հեռանկարներ կարող էին ունենալ: Եվ ամենակարևորը, ոչ ոք նրանց չէր ստիպում տեղափոխվել, այսինքն՝ չկար կառավարական որևէ որոշում, որը կստիպեր նրանց տեղափոխվել: Ընդհանուր առմամբ Ֆեյսալի իշխանության տարիներին հայ տարագիրներից շատերը չէին կարող լուրջ հաջողությունների հասնել տնտեսության մեջ, նոր գործարաններ, արտադրություններ հիմնել: Այս շրջանում նրանք սահմանափակվում էին առօրյա ապրուստի խնդիրները հոգալով. հիմնականում օրավարձով էին աշխատում կամ մանր առևտրով էին զբաղվում:

Հալեպի «Աթ-Թակադդում» թերթը բավականին խոր անդրադարձ ու վերլուծություն է կատարել նաև հայերի՝ Սիրիայում ունեցած ներդրմանն ու ընդգծել նրանց կատարած գործը: «Տարագիրների ազդեցությունը» հոդվածում կարդում ենք. «Ճշմարտությունից շեղված չենք լինի, եթե հայտնենք մեր երկրի որոշ բնակիչներին, որոնք դժգոհ են Անատոլիայի տարագիրների մեզ մոտ գալուց, որի արդյունքում աշխատող ձեռքի աճ ունենք: Վերջինիս պակասը կար մեր երկրում

---

[13] Տե՛ս Гриншилдс Х. Т., *նշվ. աշխ.*, էջ 10:

[14] Տե՛ս Дятлов В., Мелконян Э., *նշվ. աշխ.*, էջ 33:

... Տարագիրներից շատերն արդյունաբերական աշխատանքներում փորձ ունեն, աշխուժացնում են աշխատաշուկան: Եթե չլինեին հայ տարագիրները, որոնք ցանում են, հնձում, ապա շատ հողեր անմշակ կմնային»[15]:

Բացի դրանից, արաբները դժվար էին համակերպվում այն փաստի հետ, որ հայերը կարող էին հաջողությունների հասնել առևտրի բնագավառում՝ համարելով դա իրենց մենաշնորհը: 1924 թ. «Սուրիահայ տարեցոյցում» նշվում է. «Սուրիա այժմ իր մէջ կը պահէ 150 հազարի մօտ տարագիր և տեղացի հայութիւն, որուն թէ տեղացին և թէ ֆրանսական կառավարութիւնը հիւրասէր ընթացք մը կը ցուցնեն և հայերն ալ լաւագոյն յարաբերութիւններու մէջ են անոնց հետ, մանաւանդ եթէ երկրագործութեամբ պարապելով Սուրիոյ հողը օգտագործէին և առեւտրական գործը տեղացիին թողուին»[16]:

Հայ տարագիրների՝ սոցիալական ոլորտում արձանագրված հաջողությունների փաստին են անդրադարձել ժամանակակից արաբ պատմաբանները՝ քննելով դրա պատճառները: Վերջիններս հայ տարագիրների էթնիկ վարքագծի մեջ նկատում են իրենց արագ վերագտնելու, համակերպվելու և դրան զուգահեռ ազգային ինքնությունը պահելու միտում: Սոցիալական ոլորտում բավականին կարճ ժամանակամիջոցում նրանք զգալի հաջողությունների են հասնում, ինչը նաև սիրիացի ժողովրդի դրական վերաբերմունքի արդյունքն էր: Չնայած հայերը ստիպված էին աշխատել օրվա ապրուստի համար, բայց դրան զուգահեռ հիմնում էին դպրոցներ, մշակութային հաստատություններ և այլն: Հայ տարագիրները գործում էին տարբեր բնագավառներում՝ զուգահեռաբար ու արդյունավետ: Իրենց պահում էին առողջ բանականություն ունեցող մարդու նման, մի երկրում, որն իրենց հոգատարություն էր ցուցաբերել:

Մուսա Պրենսը հայ տարագիրների համար նշում է երկու կարևոր հատկանիշ, առանց որոնց դժվար կլիներ հաղթահարել ցեղասպանության բարդույթը: Հայկական էթնոհոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելով՝ նա եզրակացնում է, որ հայի տեսակն ունի ցեղային երկու բացառիկ հատկություն. «առաջինը՝ ընտելացումի հատկութիւնն է, երկրորդը՝ կենսունակութեան»[17]: Այս երկու հատկություններն են պայմանավորում հայկական լինելիությունը:

Ապաստան տվող երկրներում, որտեղ հետագայում կազմավորվում, իսկ որոշ տեղերում էլ վերակազմավորվում է հայկական սփյուռքը, Մ. Պրենսի կարծիքով «պետք չկայ ընտելացումի ապացոյցներ տալու»[18]: Հեղինակն անժխտելի է համարում նաև հայ ազգի կենսունակությունը, որը նա դրսևորում է կյանքի գործունեության բոլոր իրավիճակներում:

---

[15] صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدول العثمانية ، ص 185.
Հալեպի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը հայերի և արաբների վիճակի մասին Օսմանյան պետության մեջ ու Սիրիայում, Ա. Քեշիշյանի խմբագրությամբ, Դամասկոս, էջ 185:

[16] «*Սուրիահայ տարեցոյց*», 1924, էջ 295:

[17] Պրենս Մ., *Հայկական լինելիությունը*, տե՛ս «*Ազդակ*», 19 օգոստոս, 1967 թ.:

[18] Նույն տեղում:

Արաբական երկրների էթնոմշակութային հարցերով զբաղվող Ն. Միգլիորինոն հայ տարագիրների համար նույնպես նշում է մի քանի բնորոշիչ հատկություններ՝ առաջին հերթին ընդգծելով նրանց վճռականությունն ու ձգտումը Սիրիայում իրենց Հայաստանը կամ հայկականը վերականգնելու ուղղությամբ: Հայտնվելով էականորեն տարբերվող, մասամբ նաև թշնամական միջավայրում՝ տարագիրները փոխօգնության էին ձգտում՝ դժվարությունները և ճգնաժամերը հաղթահարելու համար: Հայ տարագիրների մեջ «...վերականգնելու վճռականությունը բխում էր առկա համայնքի ուժեղ համախմբվածությունից ու այն փաստի գիտակցումից, որ ցեղասպանությունն, իրոք, կարող է ոչնչացնել հայկական մշակույթը»[19]:

Հայ տարագիրների սոցիալական իրավիճակի բարելավման համար հարկ է մեջբերել Օսման Աթ-Թուրքի դիտարկումը. «Երբ նրանք ոտք դրեցին մեր հողի վրա, սեփական ձեռքերից բացի ոչինչ չունեին: Նրանք իրենց կատարած ծանր աշխատանքով վաստակեցին իրենց ապրուստը: Եվ այդ դժվարությունների հետ մեկտեղ նրանք հասարակության մեջ իրենց հարգալի տեղը զբաղեցրին, մասնակցեցին երկրում արտադրության զարգացմանը, տնտեսության մակարդակի աճին»[20]:

Բացառությամբ Կիլիկիայի մի քանի շրջաններից եկած հայերի, մյուսները հիմնականում թշվառ վիճակում էին հասել Սիրիա: «Հայերն այստեղ հաստատվում են դատարկության և ունայնության մեջ»[21]: Միայն սեփական աշխատանքն է նրանց օրվա ապրուստն ապահովում: Հայերը կարողանում են դուրս գալ տարագրի, ցեղասպանության զոհի կարգավիճակից ու աստիճանաբար ինտեգրվել սոցիալական կյանքում՝ դառնալով Սիրիայի տնտեսական կյանքի կարևոր օղակներից մեկը: Հետազոտողների մեծ մասը հայ տարագիրների վերոնշյալ հատկանիշներն են համարում նրանց վերապրելու և տարածաշրջանի ամենակենսունակ ու ծաղկող համայնքներից մեկը դառնալու նախապայմանը[22]: Ուսումնասիրողներից շատերը փաստում են, որ հայ տարագիրների ինտեգրումը Սիրիայում, ի տարբերություն Լիբանանի, ավելի սերտաճած էր ու ավելի արագ տեմպերով էր իրականանում[23]:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում հայ տարագիրների համար միշտ առկա է եղել վրանաքաղաքներից տեղափոխվելու խնդիրը, որոնց առկայությունը տարագիրների համար ուներ իր դրական և բացասական կողմերը: Տարագիրներն այդտեղ մնում էին երբեմն կամավոր, երբեմն էլ՝ ստիպողաբար, բայց պարզ է, որ

---

[19] Migliorino N., *(Re)constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis*, Studies in Forced Migration, Oxford, 2008, vol 21, p. 47.

[20] عثمان الترك، صفحات من تاريخ الامة الارمنية، حلب، 1960 ، ص 284.

Օսման Աթ-Թուրք, *Էջեր հայ ժողովրդի պատմությունից*, Հալեպ, 1960, էջ 284:

[21] تياري كوشو يت، بحثا عن مكان، اندماخ الارمن الاقتصادي في لبنان، أرمن1917-1939 ، ص 245،

Թիյարի Քուշվեյթ, *Հայերի տնտեսական ինտեգրումը Լիբանանում*, տե՛ս *«Հայերը 1917-1937»*, խմբ.՝ Ռ. Գևորգյան, Բեյրութ, «Համազգային», 2010, էջ 245:

[22] Տե՛ս Дятлов В., Мелконян Э., *նշվ. աշխ.*, էջ 109:

[23] فاهي طاشجيان، من مخيمات لاجئين الى احيأ حضرية، أرمن1917-1939 ، ص 125 ،

Տե՛ս նաև Թաշճյան Վ., *Գաղթականական վրանաքաղաքից դեպի հատուկ թաղամասեր*, տե՛ս «Հայերը 1917-1939», էջ 125:

խոսքը չքավորների մասին էր: Գաղթականների գրասենյակի սիրիական ներկայացուցիչ Ջորջ Բուռնիեն վկայում է, որ արդեն 1926 թ. վրանաքաղաքների բնակիչները կարող էին փոխադրվել քաղաք, բայց դեռ նախընտրում էին մնալ այդտեղ՝ փող խնայելու համար: Պետք է հաշվի առնել, որ այդ շրջանում գաղթականներն ապրում էին ավելի բարվոք վրանաքաղաքներում: 1925 թ. դրությամբ 100-ից 33.9 տոկոսը զբաղվում էր ասեղնագործությամբ, 25.9 տոկոսը առևտրով ու բանվորությամբ[24]: Չնայած հայ տարագիրները չէին խուսափում աշխատանքից, սակայն ծանր տնտեսական վիճակը լուրջ խոչընդոտներ էր ստեղծում նաև նրանց համար: Իսկ վրանաքաղաքներում ապրելով՝ հայ տարագիրներն, իսկապես, կարող էին գումար խնայել, սակայն այդ իրավիճակը երկար չի տևում:

Սկզբնական ժամանակահատվածում իշխանություններն արտոնել էին հայ տարագիրներին հող հատկացնել, որտեղ և ստեղծվել էին վրանաքաղաքները, բայց այդ հողերը պատկանում էին հալեպցի հողատերերին: Վերջիններս ժամանակի ընթացքում սկսում են իրենց հողերը հետ պահանջել: «…հայերը կ'ապրէին հոն առանց վարձք վճարելու եւ հողատէրը նախապես վարձք պահանջած էր, բայց ֆրանսիական կառավարութիւնը արգելք եղած էր»[25]: Հողատերերի պահանջների արդյունքում հայ տարագիրները պետք է նրանց հողի վարձ ու ջրի տուրք վճարեին, բայց նրանց «արտոնված չէր այդ հողերի վրա տուն կառուցել»[26]: Ամենայն հավանականությամբ, հայ տարագիրներն այդ վճարումները հողատերերին չեն արել՝ ֆրանսիական իշխանության պաշտպանությունն ունենալով, երբեմն էլ սոցիալական ծանր վիճակի պատճառով: Այս ընթացքում վրանաքաղաքներն աստիճանաբար վերածվել էին հյուղակների, և տարագիրները, անկախ սոցիալական կարգավիճակից, չէին փորձում այդտեղից դուրս գալ: Բնական է, կառավարությունը երկար չէր կարող ստիպել հողատերերին հայ տարագիրներին իրենց հողերի վրա պահել, քանի որ դա կարող էր հանգեցնել հայերի և տեղի արաբ բնակչության հարաբերությունների վատթարացմանը: Վրանաքաղաքները նաև լուրջ առողջապահական խնդիրներ էին ստեղծում: Ֆրանսիական կառավարությունը փորձում էր հայ տարագիրներին հասկացնել, որ այս իրավիճակը երկար չի կարող շարունակվել, իսկ հայերն էլ փորձում էին որքան հնարավոր է ժամանակ շահել:

Հարկ է նշել, որ հայ տարագիրները միշտ նախընտրում էին կենտրոնացված ապրել՝ պայմանավորված էթնիկ և տնտեսական գործոնների փոխկապակցվածությամբ: Էթնիկ գործոնն ուներ երկու մակարդակ. առաջին մակարդակում այն տարածվում էր համայնքի վրա ամբողջությամբ, երկրորդ մակարդակում գործում էր համերկրության սկզբունքը: Հայ տարագիրների ապրելակերպն ու վարքագիծը, որն ուղղված էր կենտրոնացվածությանը, պայմանավորված էր նաև տնտեսական գործոնով:

---

[24] Տե՛ս Կրինշիլտս թ., *Հայ Գաղթականներու տեղափոխումը Հալէպի մէջ 1920-1939*, տե՛ս *«Գեղար»*, Սուրիական Տարեգիրք, 1976-1978 միացեալ թիւ, Բ գիրք, Հալեպ, «Շարք», էջ 262:

[25] Նույն տեղում, էջ 262-263:

[26] Վարժապետեան Ս. Յ., *նշվ. աշխ.*, էջ 40:

Ֆրանսիական կառավարությունը մտավախություն ուներ հայ տարագիրների՝ մեծ քաղաքների, թեկուզ և ծայրամասերում համախմբված բնակություն հաստատելու փաստից[27]: Նախ, չափազանց կենտրոնացումը երբեմն ավելի էր խորացնում սոցիալական դժվարությունները: Բացի դրանից, հայերը կարող էին համագործակցել արաբների հետ ընդդեմ ֆրանսիացիների:

Իրավիճակն ավելի է բարդանում, երբ 1921թ. հոկտեմբերի 20-ին Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագրով Ֆրանսիան պարտավորվում էր երկու ամսվա ընթացքում հեռանալ Կիլիկիայից: Պայմանագրի 6-րդ հոդվածը, որով Թուրքիան խոստանում էր հարգել «փոքրամասնությունների իրավունքները», արդեն չէր կարող վստահություն ներշնչել Կիլիկիայի քրիստոնյա ազգաբնակչությանը, հատկապես հայերին և հույներին: Փաստորեն Կիլիկիա մեկնած հայերը կրկին անցնում են տարագրության ճանապարհը դեպի Սիրիա: Ֆրանսիական կողմը միջոցներ էր ձեռնարկում՝ արտագաղթը կասեցնելու համար: Նոյեմբերի 8-ին Ֆրանսիայի Բարձրագույն կոմիսար, Արևելյան բանակի ընդհանուր ղեկավար գեներալ Գուրոն համոզում էր Կիլիկիայի ազգաբնակչությանը վստահել պայմանագրով իրենց տրված իրավունքներին ու մնալ տեղերում, բայց գործընթացը դուրս էր եկել վերահսկողությունից ու տարերայնորեն շարունակվում էր:

Սկզբնական շրջանում ֆրանսիական իշխանությունները մերժում են Սիրիայում ընդունել Կիլիկիայից արտագաղթողներին, անգամ հրաժարվում էին նավեր տրամադրել հայերին, որպեսզի նրանց դուրս բերեն այդտեղից: Միայն միջազգային հասարակական ճնշման տակ համաձայնում են վերջիններիս ընդունել Սիրիայում: Շուտով ֆրանսիական իշխանությունները գաղթականների տեղավորման միջոցներ էին ձեռնարկում, որպեսզի Հալեպն ու այլ հայաշատ քաղաքներ չխճողվեն նորեկներով: Սկզբում Բարձրագույն կոմիսարությունը ցանկանում էր հայ գաղթականներին կենտրոնացնել թուրք-սիրիական սահմանագծից հեռու շրջաններում՝ թուրքական կողմին սիրաշահելու համար: Ռոբեր դը Քենը՝ Բարձր կոմիսարության պաշտոնակատարը, հրաման էր տվել ֆրանսիացի սպաներին տարագիրներին տեղավորելիս առաջնահերթությունը տալ հարավային շրջաններին: Մինչդեռ հայտնի է, որ հայ տարագիրները նախապատվությունը տալիս էին քաղաքային բնակավայրերին: 1922 թ. հունվարին Դամասկոսում արդեն հաստատվել էին 6000 հայեր: Հալեպը և Համան նույնպես հարմար էին այդ տեսակետից: Դյորթ-Յոլի մոտ 14 հազար տարագիրների մի մասն ապաստանել էր Ալեքսանդրետի ծայրամասի «արևմտյան գաղթակայանում»՝ Հալեպ-Բեյլան ճանապարհի երկու կողմերում՝ չորսից-հինգ հազար հայերով, իսկ մյուս մասն էլ՝ «արևելյան գաղթակայանում»՝ 7-8 հազար գաղթականներով: Նրանք բնակվում էին իշխանությունների օգնությամբ կառուցված տնակներում, որտեղ տիրող վատ տնտեսական պայմանների պատճառով Ալեքսանդրետի շրջանից 2500 մարդ փոխադրվում է Լաթաքիայի շրջան և տեղավորվում Տարտուսում, Բանիասում և այլ բնակավայ-

[27] Ֆրանսիական կառավարությունը նաև մտավախություն ուներ, որ հայերի՝ ճամբարներում կենտրոնացած բնակվելը կարող է նպաստել նաև կոմունիստական տրամադրությունների աշխուժացմանը:

ներում: Լաթաքիայի Հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ Ներսես Վարդ. Տոլապճյանի՝ Սահակ կաթողիկոսին հասցեագրված 1922թ. հունվարի 3-ի ձեռագիր նամակում կարդում ենք. «Տարաբաղդ փախստականների հարազատների մի մասը՝ 2500-ի մօտ Լաիոդիկէի օտար ափունքը հասած էին… կառավարութիւնը զինորներոյ օգնութեամբ ցամաք հանեցինք և քաղաքի քանի տեղեր տիղաւորած ենք. թէ կառավարութիւնը, թէ տեղացիք կը վստահեցնին, որ այս երկրի մէջ ժողովուրդը աւելի հանգիստ պիտի ապրի, քան ուրիշ երկրներ»[28]:

Հալեպի «Աթ-Թակադդում» թերթն իր 1922թ. «Հայ տարագիրները Հալեպում» խորագրի տակ գրում է. «Շարունակվում է հայերի ու հույների գաղթն Անատոլիայից դեպի Սիրիա արդեն հայտնի դեպքերի պատճառով»: Թերթը տեղեկացնում է, որ ֆրանսիական կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում հայ տարագիրներին ապաստան տալու և նրանց բուժման համար միջոցառումներ կազմակերպելու գործին: Վերջիններիս ժամանակավոր կեցության համար հատկացվել են Խան Ալ-Թաթին և Խան Ալ-Քուլի վայրերը: Թերթը հավելում է. «Բարձրագույն կոմիսարի պահանջով գումարներ են տրամադրվել հայ տարագիրներին տներ վարձելու, ինչպես նաև նրանց համար սնունդ հայթայթելու համար»[29]:

Թերթն իր էջերում պարբերաբար անդրադառնում էր հայ տարագիրների խնդիրներին ու տեղեկացնում տեղական ու ֆրանսիական իշխանությունների կողմից վերջիններիս ցուցաբերվող օգնության մասին: «Տարագիրների զբաղմունքը» հոդվածում նշվում է. «Տեղական կառավարությունը և ֆրանսիական պատվիրակությունը, տեղի բնակչությունը մարդասիրական վերաբերմունք են ցուցաբերում այդ թշվառների նկատմամբ»[30], ինչպես նաև 1923թ. կրկին նշվում է. «Կառավարությունը, բարեգործական ընկերությունները, անհատները ջանքեր են գործադրում՝ թեթևացնելու հայ տարագիրների վիճակը»[31]:

1921թ. հոկտեմբերի 20-ին Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագիրը բացառեց կիլիկիահայերի վերադառնալու հավանականությունը: Այնպես որ Սիրիայում ապաստանած հայերը պետք է տեղում փորձեին հաստատվել ու առաջ գնալ: Ստեղծված նոր իրավիճակում փոխվում է հայ տարագիրների՝ Սիրիայում մնալու ձևաչափը: Նրանք սկսում են մշտական բնակության մասին մտածել, որը խթանում է նրանց ներգրավվածությունը Սիրիայի սոցիալ-տնտեսական և արդյունաբերական կյանքում: Այս իրողությունը ևս մեկ փաստ էր, որը լարում էր մտցնում հայ-արաբական փոխհարաբերություններում:

Հարկ է նշել, որ Առաջին աշխարհամարտից հետո Հալեպի մեքենաշինական, մետաղագործական, կաշվի ու կոշիկի, ակնեղենի, հյուրանոցային, ժամագործական և այլ ձեռնարկությունների 20-50 տոկոսի սեփականատերերը հայեր

---

28 ՀԱԱ, ֆ. 421, ց. 9, գ. 4, թ. 1:

29 صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدول العثمانية ، ص 177-178.
Հալեպի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը…, էջ 177-178:

30 Նույն տեղում, էջ 179:

31 Նույն տեղում, էջ 186-187:

էին: Ավելի նշանակալից էր հայերի դերն առողջապահության ոլորտում[32]: Հայերի ձեռքում էին կենտրոնացած նաև ճարտարապետությունը, լուսանկարչությունը, գեղարվեստական բացիկների արտադրությունը, երաժշտական գործիքների, նվագարանների և ձայնապնակների առևտուրը[33]:

Հայ արհեստավորները զգալիորեն զարգացնում են արհեստագործությունը, հատկապես գորգագործությունը, որը գրեթե նորություն էր Սիրիայում: Մինչ այդ Սիրիայում կային մի քանի գորգագործական արհեստանոցներ, որոնք հիմնականում արտադրում էին քիլիմ կամ այսպես կոչված քրդական գորգեր: Իսկ հայերը կարճ ժամանակահատվածում կարողանում են գորգագործությունը բարձր մակարդակի հասցնել:

Բրիտանացի Յ. Բարթն իր զեկուցագրում տալիս է Հալեպում հայ տարագիրների աշխատանքային ներգրավվածությունն ըստ մասնագիտությունների՝ նշելով. «Հալեպում 8 հազարը զբաղվում էին ասեղնագործությամբ ու գորգագործությամբ, 6 հազարը բանվորներ ու ծառայողներ էին, 5377-ը՝ առևտրականներ և 623-ը՝ բժիշկներ, ատամնաբույժներ, դեղագործներ և ուսուցիչներ: Շուրջ 5 հազար երեխաներ դպրոց էին հաճախում»[34]:

Հայ տարագիրները կարևոր դեր են կատարում ալաջա[35] գործվածքի արտադրության մեջ: Հայերը Հալեպում մեծ թափով առաջ են տանում այդ արտադրությունը, որի հիմնական մասն արտահանվում էր Թուրքիա: Հայ կանայք մեծ հաջողությունների էին հասել նաև ասեղնագործության բնագավառում, ինչը նրանց մենաշնորհն էր: Կ. Եփփեի ջանքերով հիմնվել էին ասեղնագործական տներ, և հայ կանանց ասեղնագործություններն արտահանվում էին: Հարկ է նշել, որ իշխանությունները մաքսատուրքից ազատել էին ասեղնագործության համար անհրաժեշտ նյութերի ներմուծումը, իսկ արտահանվող ապրանքներից գանձվում էր ինքնարժեքի մեկ հարյուրերորդականը, ինչը նպաստում էր ասեղնագործության հետագա զարգացմանը[36]: Այսպիսով, հայ տարագիրների՝ արհեստներին գերազանցապես տիրապետելու փաստը դառնում է նրանց ֆինանսական հիմնական աղբյուրը[37]:

Ս. Դադի վերոնշյալ տեղեկագիրը մանրամասն ներկայացնում է այն առավելությունները, որոնք բերել են եկվոր հայերը Սիրիային. նրանք մեծ թափ են հաղորդում շինարարությանը, քաղաքների դիմագիծը սկսում է փոխվել: Նա նշում է, որ

---

32 Նաջարյան Ե., *Հայ-արաբական փոխհարաբերությունները Սիրիայում /1918 հոկտեմբեր-1919 հունիս/*, *«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ»*, Երևան, 1974, «Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն», հ. 6, էջ 136:

33 Նույն տեղում:

34 Burtt J., F. R. G. S., *The people of Ararat*, London, The Hogarth Press, 1926, p. 109.

35 Ալաջան հատուկ գործվածք է, որն օգտագործվել է՝ արևելյան հասարակ զգեստներ կարելու համար:

36 Թոփուզյան Հ., *Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն /1841-1946/*, Երևան, «Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն», 1986, էջ 186:

37 دیران بابیکیان،مسیرة الارمني من کیلیکیا لجا الی لبنان ، أرمن1917-1939 ، ص 244.

Պապիկյան Դ., *Մի հայի գաղթի ճանապարհը Կիլիկիայից Լիբանան*, տե՛ս «Հայերը 1917-1939», էջ 224:

հայ տարագիրները խթանում են երկրի տնտեսական կյանքը. «Անուրանալի իրականութիւն է, թէ աժան ձեռային աշխատանքը մեծ շահ կ'ապահովէ երկրին: Սուր մրցակցութիւնը նմանապէս հրապարակէն քշեց անկարող արհեստաւորները եւ որակը բարձրացուց: Այս կացութենէն ի վերջոյ շահողը դուրս եղաւ երկիրը»[38]:

Սիրիայի տնտեսական կյանքում սկսեց աշխույժ գործունեություն ծավալել «Նշարթվա» հյուսվածքեղենի ընկերությունը, որը հիմնվել է տիգրանակերտցիներ՝ Նշան Փալանջյանի, Հարություն Որբերյանի և Վահան Աճեմյանի ջանքերով, Հալեպի Սուլեյմանիե թաղամասում: Ընկերության հիմնադրման թվի մասին ստույգ տեղեկություններ չկան: Սակայն, ամենայն հավանականությամբ, այն բացվել է մինչև 1925թ.: Գործարանը համարվել է առաջնակարգ արդյունաբերական ձեռնարկություն՝ վայելելով բացառիկ վարկ իր որակյալ արտադրանքով:

Հայ տարագիրներն առաջատարներ են եղել ավտոմեքենաների սպասարկման և նորոգման բնագավառներում: Հայ վարպետները մեկնակետը դարձան բազմաթիվ նոր վարպետների ինքնահայտնության[39]: Ոլորտի առաջին վարպետներից է եղել Լևոն Յավերյանը, ով 1912թ. գերմանացիների նախաձեռնությամբ Սիրիա-Իրաք երկաթգծի շինարարության վրա է հմտացել, անգամ նրան է հանձնվել Եփրատ գետի վրա կառուցված շոգեկառքի փորձարկումը: Սեդրակ և Միսակ Նալբանդյան եղբայրները նույնպես մեծ ներդրում են ունեցել այս բնագավառում՝ 1924թ. հիմնելով սեփական արհեստանոցը: Տ. Թոքմաջյանը Հալեպում հիմնել է մարտկոցների վերալիցքավորման առաջին արհեստանոցը:

Հայերը Սիրիայում բազմաթիվ նորամուծություններ են մտցրել, որոնք վերջիններիս մենաշնորհն են եղել այդ ժամանակահատվածում: Հաստոցագործության, եվրոպական ոճի հագուստի դերձակության ոլորտում հայերը նույնպես նախաձեռնողներ են եղել: 1919-1930 թթ. հայ կազմարարներից է եղել Գարեգին Տարագճյանը, ով 1919 թ. Սալիբե թաղամասում իր բնակարանն արհեստանոց է դարձրել: Գեղազարդելու արվեստի մեջ վարպետացել է նաև Հովհաննես Բասմաճյանը[40]: Հալեպում հաց թխելը հայերի և հատկապես սասունցիների մենաշնորհն է եղել: Քաղաքի բոլոր փռապաններին տեղացիներն անվանում էին սուսանիներ: Հովհաննես Դաբբաղի (Դաբբաղյան)՝ 1906 թ. Հալեպում հիմնած կաշեգործարանը մինչև 1921 թ. միակն էր Սիրիայում և Լիբանանում: Նրա արտադրանքը բազմիցս արժանացել է միջազգային տարբեր ցուցահանդեսների մրցանակների: Նշենք նաև, որ Հալեպի Մազլումյան եղբայրներին պատկանող «Օթել Պարոնը» և Ալթունյան հիվանդանոցը միակ շենքերն էին, որոնք 1920-21 թթ. էլեկտրականություն են ունեցել:

Սիրիայի արաբները գնահատել են հայ արհեստավորների վարպետությունը, վստահելիությունն ու ձեռներեցությունը: Հայ տարագիրների վարպետությանն ու Սիրիայի տնտեսական կյանքում նրանց ներդրմանն է անդրադարձել արաբ գրող,

---

38 Վարժապետեան Ս. Յ., *նշվ. աշխ.*, էջ 44:

39 Տե՛ս Քառիկեան Յո., *Մեքենագործութիւնը Հալէպի մէջ եւ Առաջին հայ վարպետները*, տե՛ս *«Գեղարդ»*, 1976-1978 միացեալ թիւ, Հալէպ, 1978, գիրք Բ, էջ 299:

40 Նուռեան Շ., *Կազմարարութեան արուեստը եւ Հալէպի հայ կազմարարները*, տե՛ս «Գեղարդ», գիրք Բ, էջ 336:

հասարակական գործիչ Ուալիդ Իխլասը. «Կարևոր է, որ հայ ժողովուրդը կարողացավ հաջողությամբ համագործակցել հյուրընկալ սիրիացի ժողովրդի հետ: Դրա հետ մեկտեղ նա իր ինքնությունը փաստեց ու իր ծառայությունները մատուցեց մեր երկրին՝ ստեղծագործելով ու կառուցելով: Նա զարմացրեց սիրիացի ժողովրդին իր վարպետությամբ, ձեռքի շնորհքով: Նրանք այնպիսի արհեստների և արդյունաբերական ճյուղերի էին տիրապետում, որոնք անծանոթ էին մեր երկրի զավակներին»[41]:

«Հալէպի տնտեսական վիճակը եւ Հիւսիսային երկիրներէ եկող գաղթականները» հոդվածում Ս. Զեմբերթը նշում է, որ երկրում արտահանումը նվազել է, գները բարձրացել են, աշխատուժն ավելի էժան է դարձել: «Հիւսիսի զանազան երկրներէ եկող գաղթականները, ինչպէս կը կարծեն, այս քաղաքի տնտեսական կեանքին մէջ, հոգ, նեղութիւն և դժուարութիւններ ստեղծած չեն: Ընդհակառակը շատ լայն չափով գործակցած են ձեռարուեստի գիներուն նուազման մէջ»[42]:

Հայ տարագիրների սոցիալական ծանր վիճակից դուրս գալուն և փոքր-ինչ կայանալուն պակաս չի նպաստել հայրենակցական միությունների գործունեությունը: Եթե նախքան Առաջին աշխարհամարտը հայկական գաղթօջախներում գոյություն ունեցած հայրենակցական միությունների հիմնական նպատակն իրենց գյուղի, քաղաքի կամ գավառի կրթամշակութային գործին օգնելն էր, ապա 1915թ. և հատկապես Կիլիկիայի դեպքերից հետո հայրենակցական միությունների նպատակը հնարավոր բոլոր միջոցներով հայ որբերի ու կանանց համար ապրուստ հայթայթելու և հայապահպան գործին նպաստելն էր: Համայնքի ձևավորման տարիներին՝ քսանական թվականների առաջին կեսերին, պատահական երևույթներ չէին հայրենակցական միությունների նախաձեռնությամբ և համայնքային հիմունքներով կազմակերպված կրթօջախների և հայկական տպարանների վերաբացումն ու հիմնումը:

Հայրենակցական միությունները հրատարակում էին իրենց հայրենի գավառների, քաղաքների ու գյուղերի պատմությունը: Նրանց կատարած դրական աշխատանքների թվում են դասվում նաև տարիներ շարունակ պահպանվող տպագիր պարբերականները: Ինչպես հայրենակցական միությունները, այնպես էլ մշակութային միությունները և ակումբները շնորհակալ աշխատանք են կատարել՝ սփյուռքահայությանը ձուլման վտանգից փրկելու համար:

Հասարակական կյանքում իրենց յուրահատուկ տեղն ունեին մարզական միությունները, որոնց նպատակը ոչ միայն պատանիների ու երիտասարդների կոփումն էր, այլև տարբեր խավերի համախմբումը: Մինչև 1915թ. Հալեպում գործել է «Աղբյուր մարմնամարզական միությունը»՝ իր ֆուտբոլի, ատլետիկայի խմբերով: Հարկ է նշել մի հետաքրքիր դրվագ. Հալեպի նահանգապետը, ներկա լինելով հայկական դպրոցներում մարզական խաղերին, տեղեկություններ հավաքելով նրանց գործու-

---

[41] أريسيان نورا، غوائل الارمن في الفكر السوري، دمشق ، الفرات، 2002 ، ص 166-167

Արիսյան Ն., *Հայկական սարսափները սիրիական մտքում*, Դամասկոս, «Ալ-Ֆռաթ», 2002, էջ 166-167:

[42] «*Սուրիահայ տարեցոյց*», Հալէպ, «Արաքս, Բ. Թօփալեան», 1925, էջ 79:

նեության մասին, 1919թ. Ազգային քաղաքային ժողովի ատենապետից խնդրում է արաբական վարժարաններին նույնպես տրամադրել մարմնամարզության ուսուցիչ: Այսպիսով, Հայկազյան վարժարանի մարմնակրթարանի ուսուցիչ Լևոն Աբգարյանը դարձել է մարմնակրթության առաջին ուսուցիչը Հալեպի Սուլթանիե (այժմ՝ Մամուն) վարժարանում[43]: Սիրիայում մարզական կազմակերպություններից ավելի ուշ իրենց գործունեությամբ և կազմակերպվածությամբ առանձնանում էին երկուսը՝ Հայ մարմնակրթական միությունը (ստեղծվել է 1921 թ. Հալեպում) և Հայ մարմնամարզական ընդհանուր միությունը (ստեղծվել է 1925 թ.)[44]:

Հայ տարագիրների սոցիալապես կայանալուն, տնտեսության ոլորտում մենաշնորհներ ձեռք բերելուն զուգահեռ հայ տարագիրների նկատմամբ նշված ժամանակահատվածում որոշակի դժգոհություններ են առաջ գալիս Սիրիայի քաղաքային բնակչության շրջանում, այն պատճառաբանությամբ, թե նրանք բեռ են դարձել իրենց երկրի համար: Չնայած սիրիական մամուլում տպագրվել են նաև հակառակ կարծիքներ: Հալեպի «Աթ-Թակադդում» թերթն այդ կապակցությամբ գրում է. «Եթե մի քիչ խիղճ ունեք, կօգնեք դժբախտ տարագիրներին, հնարավորին չափով կթեթևացնեք նրանց դժբախտությունը: Հայերին տարբեր տեղերից (հայրենակիցներ, ընկերներ, բարեգործական ընկերություններ) ֆինանսական օգնություն են ուղարկում, որը մեր երկրում է ծախսվում, թեթևացնում ֆինանսական սղությունը ... քաղաքի ժամանակակից կառույցների մեծամասնությունը հայ տարագիրների շնորհքն է ... Այնպես որ, դժգոհության որևէ գիտակից պատճառ չենք տեսնում, անգամ եթե մեր շահերը հաշվի առնենք, ապա թույլ կտանք նրանց մեզ մոտ մնալ»[45]:

Այս հոդվածում հատուկ անդրադարձ է արվում հայերի ներկայությունից դժգոհ խավին. «... դժգոհ մարդկանց հետ ուզում ենք խոսել զուտ ֆինանսական տեսակետից՝ առանց զգացմունքների և փաստում ենք, որ տարագիրները բեռ չեն մեր երկրի համար, անգամ նրանց ներկայությունն օգտակար է»[46]:

Նման դժգոհություններն իրենց արձագանքն են գտել նաև Սիրիայի Դաշնային խորհրդի[47] 1924թ. հունվարի նիստում, որտեղ քննարկման էր դրվել հայ տարագիրների հարցը, և առաջարկվել էր Հալեպի, Դամասկոսի և մյուս քաղաքների ճամբարների տարագիրներին վերաբնակեցնել Ալեքսանդրետի ներքին շրջաններում: Նիստում հնչել են դրական և բացասական կարծիքներ: Համայի պատգամավոր

---

43 Սապունճեան Զ., ՀՄԸՄ-ն Հալէպի մէջ, տե՛ս «*Գեղարդ*», գիրք Բ, էջ 421:

44 1922 թ. Դամասկոսում Կարապետ Գավաֆյանի նախաձեռնությամբ ստեղծվել են «Վահագն», «Շանթ» պատանեկան միությունները, ավելի ուշ՝ «Արծիվ», «Մասիս», «Դրո», «Կայծակ» խմբերը, որոնք միավորվելով ստեղծել են Դամասկոսի մասնաճյուղը:

45 صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدول العثمانية ...، ص 187.
Հալեպի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը..., էջ 187:

46 Նույն տեղում:

47 1922 թ. հունիսի 28-ին ֆրանսիական գլխավոր կոմիսար Գուրոն հատուկ դեկրետով ստեղծում է «Սիրիական ֆեդերացիա», որի մեջ մտնում են Դամասկոսի, Հալեպի և Ալավիների պետությունները: Նախագահ է ընտրվում Սուբհի Բարաքաթը: 1924 թ. դեկտեմբերին Գլխավոր կոմիսար Վեյգանը լուծարել է Դաշնային ֆեդերացիան:

Ռաշիդ Բարազին առաջարկել է արգելել հայ տարագիրների մուտքն այն պատճառաբանությամբ, թե հայերի թիվը Սիրիայում հասել է 130 հազարի, այն դեպքում, երբ սիրիացի տարագիրների թիվն օտար երկրներում կազմում է 120 հազար: Սակայն այն հարցին, թե արդյո՞ք հայ տարագիրների մուտքն է ստիպել սիրիացիներին մեկնել իրենց երկրից, պատգամավորը ժխտական պատասխան է տվել: Այս իրադարձությունների ընթացքին անդրադարձել է «Աթ-Թակադդում»-ը՝ գրելով. «Իրավունքը, հատուցումը, ազգայնականությունը պահանջում են ուժեղ համախոհներ, որպեսզի մտածեն, թե ինչպես Սիրիայից գնացող հայրենակիցներին պահեն իրենց երկրում և ոչ թե առանց մտածելու արգելեն օտարների մուտքը երկիր … տարագիրները չեն փոխում երկրի ժողովրդագրական պատկերը»[48]: Դամասկոսի պատգամավոր Հաբիբ Քահալին նույնպես իր ելույթում դժգոհություն է հայտնել հայերի ներկայության հետ կապված, մինչդեռ Հալեպի պատգամավոր Սելիմ Զեմբերթը, Դաշնային խորհրդի նախագահ Սուբհի Բարաքաթը փորձել են հիմնավորել, որ նշված փաստարկները չեն համապատասխանում իրականությանը և երկրի շահերին: Նրանք փաստում են, որ Սիրիան շատ հարցերում օգտվել է, հայերը նպաստել են տնտեսության վերակենդանացմանը և զարգացմանը:

Հոդվածի վերջում հեղինակը հորդորում է սթափ մոտենալ խնդրին, կոչ է անում աջակցություն ցույց տալ հայ տարագիրներին: «Մեր ժողովուրդը հայտնի է իր մեծահոգությամբ, բարձր բարոյականությամբ, և դա վիճելի չէ: Եվ ասենք, որ հայ տարագիրները երկրին օգտակար են եղել և ոչ թե վնասակար»[49]: Այնուամենայնիվ, Դաշնային խորհուրդը մերժում է հայ երկրագործներին վերաբնակեցնելու ծրագիրը և միաժամանակ արգելում նոր գաղթականների մուտքը Սիրիա: Անգամ Սիրիայից Հիջազ մեկնած պատվիրակությունն անհրաժեշտ է համարել Հուսեյն թագավորին տեղեկացնել Սիրիայի Դաշնային խորհրդի՝ հայ գաղթականներ չընդունելու որոշման մասին:

Հարկ է նշել, որ նույն ժամանակահատվածում հայ տարագիրների շրջանում Խորհրդային Հայաստան ներգաղթի միտումներ էին նկատվում[50]: Ընդ որում մինչև 1924թ. Սիրիայում հայ տարագիրներն արդեն մեծ թիվ էին կազմում, ու Սիրիա ներգաղթողների հոսքը գրեթե դադարել էր:

---

48 صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدول العثمانية ، ص185-186.
Հալեպի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը…, էջ 188-186:

49 Նույն տեղում:

50 Խորհրդային Հայաստան ներգաղթողների վերաբերյալ հատուկ օրենք է սահմանվում 1925 թ. հունվարի 19-ին Նախարարների խորհրդի նիստի 8-րդ հրամանագրի 16-րդ հոդվածով: Ըստ սահմանված օրենքի՝ ներգաղթողները պետք է զրկվեին սեփականության և շահագործման բոլոր իրավունքներից սիրիական հողի վրա: Ներքին նախարարության պաշտոնական հայտարարությամբ հանձնարարվում է վերացնել գաղթողների անվանացուցակները դիվանտոմարից: Այս որոշմանն ու վերջինիս արձագանքներին է անդրադառնում «Աթ-Թակադդում» թերթը: Սիրիայի կառավարությունը համաձայն էր հայերի հայրենադարձությանը, սակայն մեկնումի ժամանակ և հետագայում բարդություններից խուսափելու համար որոշվում է իրավական և նյութական բոլոր կապերը խզել մեկնող հայերի և Սիրիայի միջև: Մանրամասն տե՛ս
صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدول العثمانية ، ص301
Հալեպի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը…, էջ 301:

Հայ տարագիրները նույնպես գիտակցում էին արաբների դժգոհությունների պատճառներն ու փորձում էին ավելորդ լարվածություն չմտցնել հայ-արաբական հարաբերություններում: «Սուրիահայ տարեցոյց»-ում սիրիահայ տարագրյալներն այսպես են բնորոշում իրենց կյանքը. «Այս տնտեսական տագնապի շրջանին ամենէն աւելի արգահատելի և մտահոգիչ տարրը Սուրիահայն է ... Մենք՝ որպէս հիւր ուրիշին տան մէջ, որքան ալ վերապահութեամբ շարժվինք, վերջապէս ծանրութիւն մ՚ըլլալէ չենք դադրիր, մանաւանդ, երբ կը տեսնենք թէ տանտէրն իսկ համաշխարհային քայքայուած տնտեսական տիրող դրութենէն նեղուած, անգործութեամբ կը տառապի: Այլեւս այս կացութեան մեջ բարեկեցիկ կեանք մը յուսալ անխոհեմութիւն է պարզապէս»[51]:

Բայց այդ ամենով հանդերձ, հարկ է փաստել, որ հայ տարագիրների բերած դրական տեղաշարժերը երկրի տնտեսությունում և նրանց հաջող փորձերը՝ ներգրավվելու Սիրիայի սոցիալ-տնտեսական կյանքում, հանգեցնում են վերջիններիս վիճակի բարելավմանը: 1924 թ. հայ տարագիրների սոցիալական, տնտեսական, իրավական վիճակի փոփոխություններն ակնհայտ էին: Դա է վկայում «Աթ-Թակադդում» թերթի հոդվածը. «Տեղական և ֆրանսիական կառավարությունը, բարեսիրտ տեղացիները պարտավորվեցին իրենց վրա վերցնել հայ տարագիրների կեցության հարցի լուծումը ... որքան մեծ է տարբերությունը հայ տարագիրների այժմյան և պատերազմի ժամանակաշրջանի վիճակի միջև»[52]:

Կիլիկիայի դեպքերից հետո առավել ևս հայ տարագիրները փաստում են. «... ամեն բանէ աւելի գերադաս համարել ապահովութեան եւ խաղաղ աշխատանքին խնդիրը, որուն առաջ Սուրիոյ Արաբ կառավարութեան և մանաւանդ ֆրանսական մանդատի հոգատար իշխանության ցույց տուած հիւրընկալ եւ մարդասեր ասպնջականութիւնը զինքը թողուած են յավետ երախտապարտ, որը կարելի է փոխարինել միայն լուրջ ու շրջահայեաց ոգիով մը, խաղաղ ու կարգապահ կեանքով մը»[53]:

Այսպիսով, Սիրիայում 1915թ. հայ տարագիրների հայտնվելը նոր փոփոխություններ է մտցնում Սիրիայի սոցիալ-տնտեսական կյանքում, առաջընթաց է գրանցվում տնտեսության մի շարք ոլորտներում: Բացի դրանից, մինչ այդ գոյություն ունեցող հայ համայնքը վերափոխման է ենթարկվում: Աստիճանաբար 1920-ական թվականներին ձևավորվում են երեք հիմնական սոցիալական շերտեր: Առաջին խավն այն հայ տարագիրներն էին, որոնց միակ ունեցվածքն իրենց աշխատանքն էր. տղամարդիկ՝ շինարարական ոլորտում, կանայք՝ տնտեսության մեջ: Երկրորդ խումբը տարագիրների այն հատվածն էր, որը կարողացել էր խուսափել ճամբարային կյանքից և բնակվում էր քաղաքում՝ վարձակալած բնակարաններում: Նրանք կարող էին սեփական փոքր գործն ունենալ: Համեմատաբար բարվոք վիճակում էին այն հայերը, որոնք օտարերկրյա կազմակերպություններում կամ պետական

---

51 *«Սուրիահայ տարեցոյց»*, 1925, էջ 191:

52 صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدول العثمانية ص184.
Հալեպի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը…, էջ 184:

53 Գապպաճեան Գ. Սուրիա, քաղաքական, կրօնա-պատմական, կրթական եւ տնտեսական տեսակետով տե՛ս *«Տաթեւ»*, տարեցոյց, կրոնա-բանասիրական-գրական, Բ տարի, 1926, էջ 277:

ապարատում էին աշխատում: Երրորդ խավը կազմված էր բացառապես բնիկ հայերից՝ «արման կադիմ» (հին հայեր), որոնք հիմնականում սոցիալապես ապահովված էին:

Համայնքի առջև ծառացած հիմնախնդիրներից առավել կարևոր էր ազգային ինքնագիտակցության, մշակույթի և լեզվի պահպանման խնդիրը, որն իր վրա էր վերցրել եկեղեցին: Ցեղասպանությունը վերապրելու փաստը նոր պահանջներ էր դնում՝ ոչ միայն պահպանել նախորդ շրջանի մշակութային և հոգևոր արժեքները, այլ նաև ստեղծել նորը և ժառանգել սերունդներին: Այս փաստը համայնքը սահմանող և բնութագրող կարևոր որակումներից է[54]:

Սիրիայում հայ տարագիրների սոցիալական կայացման համար կարևոր նշանակություն ուներ նրանց իրավական կարգավիճակի հարցը: Վերջիններս Սիրիայում ամրագրվում են օրենքով, որ ավելի էր հստակեցնում նրանց իրավունքները[55]:

Այսպիսով, հայ տարագիրների սոցիալական վիճակի դրական փոփոխությունները կարելի է բացատրել մի քանի հանգամանքով. նախ՝ հայերը Սիրիայում հայտնվելու առաջին տարիներին ամենևին էլ ցանկություն չունեին ինտեգրվելու Սիրիայի կյանքում: Սկզբնական շրջանում Սիրիայում իրավազուրկ դիրքերում էին, օտար և ժամանակավոր էին իրենց զգում, ու դրան համապատասխան էր վերջիններիս գործելակերպը: Երկրորդ՝ նրանց համար առաջին հերթին կարևոր էր լուծել վերապրելու խնդիրը: Երկրում տիրող քաղաքական դեպքերին տարագիրների հիմնական զանգվածը ներգրավվածություն չուներ: Նրանք համակենտրոնացման ճամբարներում պայքարում էին իրենց առօրյա խնդիրների լուծման համար: Երրորդ, որ ցեղասպանությունը վերապրելու փաստը նրանց դեռ որոշ ժամանակ հոգեբանական կաշկանդված վիճակում էր պահում: Այս իրավիճակը, ինչպես նշեցինք, վերաբերում էր հիմնականում 1915-1918թթ., որից հետո հայ տարագիրների մոտ ոգևորվածություն է նկատվում՝ Ֆեյսալի իշխանության գալուց հետո, իսկ ֆրանսիական մանդատի շրջանում Կիլիկիայի դեպքերից հետո հայ տարագիրների այն զանգվածը, որը վերադառնում է Սիրիա, արդեն այստեղ հաստատվելու ծրագրեր ուներ: Վերջիններս նշված ժամանակահատվածում կարողանում են սոցիալապես կայանալ և աստիճանաբար իրենց Սիրիայի լիիրավ քաղաքացիներ համարել:

---

[54] Տե՛ս Абраамян Л., *Армения и армянская диаспора: Расхождение и Встреча*, 21-й Век, номер 2, 2005. էջ 137:

[55] Տե՛ս Մարգարյան Ն., *Հայոց ցեղասպանության հետևանքով Սիրիայում հաստատված հայ տարագիրների կարգավիճակը և հայ-արաբական փոխհարաբերությունները (1915-1924 թթ.)*, Երևան, ՀՑԹԻ, 2013, էջ 133-137:

ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ (1920-1924 ԹԹ.)

Նարինե Մարգարյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծվում է հայ տարագիրների ինտեգրումը Սիրիայի սոցիալական կյանքում ընդհուպ մինչև 1924թ.: Ներկայացվում են տարագիրների առջև ծառացած սոցիալական խնդիրների աստիճանական լուծումները, հայ-արաբական փոխադարձ ադապտացումը, ինտեգրման ճանապարհին հանդիպող խոչընդոտները, արաբ ժողովրդի ու ֆրանսիական մանդատային իշխանությունների կառավարության ձեռնարկած միջոցառումները և հարակից մի շարք այլ խնդիրներ:

Ներկայացվում են հայ տարագիրների սոցիալական իրավիճակի դրական փոփոխությունները, դրանք պայմանավորող գործոնները: Ներկայացվում է երկրում տիրող քաղաքական իրավիճակը, որը որոշ չափով նպաստել է հայ տարագիրների նկատմամբ արաբական կողմի դժգոհությանը: Ներկայացված գործընթացների համատեքստում հայ տարագիրները կարողանում են սոցիալապես կայանալ, վերաձևավորել տեղի հայ համայնքը և աստիճանաբար իրենց Սիրիայի լիիրավ քաղաքացիներ համարել:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, տարագիրներ, սոցիալ-տնտեսական կյանք, ինտեգրում, կարգավիճակ, արաբներ, փոխհարաբերություններ, ֆրանսիական մանդատային իշխանություն:

ИНТЕГРАЦИЯ АРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ В СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЙ ЖИЗНИ СИРИИ (1920-1924)

Нарине Маргарян

РЕЗЮМЕ

В статье анализируется интеграция армянских беженцев в социальную жизнь Сирии до 1924 года. Освещены социальные проблемы, с которыми сталкивались депортированные армяне, армяно-арабская взаимная адаптация, препятствия, стоявшие на пути интеграции армян, действия арабского народа и французского мандатного правительства, а также некоторые другие вопросы.

Изложены факторы содействовавшие улучшению социального статуса армянских беженцев. Также представлена политическая ситуация в стране, которая в определенной степени способствовала недовольству арабов в отношении армянских беженцев. В контексте представленных процессов армянские беженцы смогли постепенно социально утвердиться в Сирии, реконструктировать общину и стать полноправными гражданами страны.

Ключевые слова: Геноцид армян, беженцы, социально-экономическая жизни, интеграция, статус, арабы, взаимоотношения, французское мандатное правительство

THE INTEGRATION OF THE ARMENIAN REFUGEES INTO THE SURIA'S SOCIAL-ECONOMIC LIFE (1920-1924)

Narine Margaryan

SUMMARY

The paper analyzes the integration of Armenian refugees into Syria's social life till 1924. The process of gradual solution of social poblems faced by refugees, the mutual Armenian-Arab adaptation, the obstacles on the path towards integration, the steps implemented by French mandate Authorities and Atab people are being analyzed. The improvements in refugees' social life as well as factors fostering those developments are being presented. The paper analyzes the political situation in the country which partlially substantiated the resentment of Arab side. In the perplexed context of above mentioned factors Armenian refugees were able to re-shape the local Armenian community, improve their social-economic situation and gradually perceive themselves as full-fledged citizens of Syria.

Keywords: Armenian Genocide, refugees, social-economic life, integration, status, Arabs, relationship, French Mandate Authorities